ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի փետրվարի 25-ին:

Նիստին մասնակցել են բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները և կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Հ. Մինասյանը:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. «Բնական աղետներ» միջոցառման աշխատանքների նախնական քննարկում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
4. Մարտ ամսվա ընթացքում միջոցառումների պլանավորում (զեկուցող՝ մ/մ անդամներ):
5. ՀՄԿ-ի կողմից հեղինակած հարմարեցված աշխատանքային գիրք տետրերի ներառումը ուսումնական գործընթացում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
6. Դասալսումների ժամանակացույցի ներկայացում (զեկուցող՝ Ա.Սահակյան):

Լսեցին՝

1. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց նիստի օրակարգը բաղկացած 6 հարցից:

Լսեցին՝

2. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ բոլոր ընդունված որոշումները կատարվել են. իրականացվել է գիրք նվիրելու օրվան նվիրված գեղեցիկ ցերեկույթ, ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումներն իրականացումը մեկնարկել է ըստ ժամանակացույցի և այս պահին դեռևս ընթացքի մեջ են:

Լսեցին՝

3. Մ/մ ղեկավար Ա. Սահակյանը զեկուցեց, որ «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շջանակներում «Բնական աղետներ» թեմայով միջոցառումը կիրականացնի մասնախմբի անդամ Ալինա Թորոյանը:

Լսեցին՝

4. Մասնախմբի ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց մարտ ամսվա ընթացքում պլանավորված միջոցառումները՝մասնավորապես մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառումը:

Լսեցին՝

5. Մ/մ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց, որ ԱՈւՊ-ով սահմանված նպատակներն իրականացնելու և դասերն ավելի արդյունավետ դարձնելու համար նպատակահարմար է օգտվել

ՀՄԿ-ի կողմից հեղինակած աշխատանքային գիրք-տետրերից մասնավորապես՝ «Մաթեմատիկա 1», «Մաթեմատիկա 2» , «Ես և շրջակա 2», «Ես և շրջակա 3»:

Արտահայտվեցին

Մասնախմբի անդամները նշեցին, որ անհրաժեշտ է ձեռք բերել այն աշխատանքային գիրք-տետրերը որոնց մասին ներկայացվեց:

Լսեցին՝

6. Բնագիտական առարկաներ մ/մ ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց իր կողմից իրականացվող դասալսումների ժամանակացույց: Նշեց, որ դասալսումներն իրականացվելու է 2 ուղղությամբ՝

- ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանն միտված դասալսումներ, որտեղ որպես նպատակ սահմանվել է «Առարկայի դրվածքի ուսումնասիրություն» (5Ա, 5Բ, 6Ա):
- սովորողների կրթության արդյունավետ իրականացմանն ուղղված դասալսումներ, որտեղ որպես նպատակ սահմանել «Դասի բովանդակության համապատասխանությունը ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին» (7Գ, 7Բ, 8):

N	Ուսուցչիանուն, ազգանուն	Ամսաթիվ	Առարկա	Դասարան	Դասաժամ
1	Թորոյան Ալինա	02.03.2026	Ես շրջակա աշխարհը	7^{Գ}	7-րդ
2	Անդրեասյան Անահիտ	03.03.2026	Բնագիտություն	5^{Ա}	5-րդ
3	Գիժլարյան Կարեն	04.03.2026	Մաթեմատիկա	7^{Բ}	4-րդ
4	ԽուբլարյանԱմալյա	05.03.2026	Տեխնոլոգիա	8	4-րդ
5	Գորգինյան Սուսան	05.03.2026	Բնագիտություն	6^{Ա}	6-րդ
6	Պողոսյան Մարինե	06.03.2026	Տեխնոլոգիա	7^{Բ}	6-րդ
7	Խաչատրյան Անուշ	06.03.2026	Մաթեմատիկա	5^{Բ}	4-րդ

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի 2026 թվականի փետրվարի 25-ի նիստի օրակարգը:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ մասնախմբի ղեկավարի զեկուցումը՝ արձանագրելով, որ իրականացված աշխատանքների արդյունքները եղել են գոհացնող:
3. Ընդունել ի գիտություն, որ «Բնական աղետներ» վերաբերյալ միջոցառումն իրականացվելու է Ալինա Թորոյանի կողմից: Վերջինիս հանձնարարել ընդհանրացնել միջոցառման վերաբերյալ գաղափարները՝ հիմքում ունենալով հետաքրքիր և ուսուցողական վերջնարդյունք ունենալու հանգամանքը:
4. Ընդունել ի գիտություն մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման շրջանակներում իրականացվող նախապատրաստական աշխատանքները: Տոնական բացիկների պատրաստում և ձևավորում՝ դասարանների շրջանակում:
5. Հիմք ընդունելով դասարանների առանձնահատկությունները, սովորողների կարիքները և նախնական դիտարկումները՝ հաստատել «Մաթեմատիկա 1», «Մաթեմատիկա 2» , «Ես և

շրջակա 2», «Ես և շրջակա 3» աշխատանքային գիրք-տետրերի ցանկը, սահմանել դրանց անհրաժեշտ քանակները և ներառել ուսումնական գործընթացում որպես պարտադիր ուսումնական նյութ:

6. Հաստատված հարմարեցված գիրք-տետրերի անվանացանկը՝ ըստ տեսակի, դասարանների և անհրաժեշտ քանակների, ձևակերպել և կցել արձանագրությանը որպես հավելված:
7. Սահմանված գիրք-տետրերի ցանկը պաշտոնապես ներկայացնել տնօրինությանը՝ ձեռքբերման և բաշխման գործընթացը սահմանված կարգով կազմակերպելու նպատակով:
8. Ընդունել ի գիտություն ՄՄ ղեկավարի կողմից ներկայացված մարտին իրականացվող դասալսումների ժամանակացույցը:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Ա.Սահակյան**

Քարտուղար՝ **Ա.Խուբլարյան**

03.03.2026

Հավելված 1

Բնագիտական առարկաների առարկայական
մասնախմբի 2025-2026 ուսումնական տարվա
թիվ 7 նիստի արձանագրության

ՀՀ	Գիրք տետրի անվանում	Դասարան	Քանակ (հատ)
1.	Մաթեմատիկա 1	5-րդ, 6-րդ	29
2.	Մաթեմատիկա 2	7-րդ, 8-րդ, 9-րդ	32
3.	Ես և շրջակա 2	5-րդ, 6-րդ	29
4.	Ես և շրջակա 3	7-րդ, 8-րդ, 9-րդ	32